առաջին բարձր մասնաւոր կուրսերի բացման հանդէսը։ Այդ կուրսերի բացման նախաձեռնողներ հանդիսացել են՝ Ս. Մ. Ամբարդանեան, Պ. Բալաբուեվ, Ս. Վէլլէր, իշխան Ա. Բէհբուտեան և Ս. Սողոմոնեան։ Նրանց տեղաւորման համար վարձված է Արշակունու նախկին տունը, շինված արևելեան ճաշակով։

Կուրսերի բացումը մի հանդիսաւոր ազնվատարութեան բնաւորութիւն էր կրում։

Ընդարձակ դահլիճը լցված էր ինտելիգենտ հասարակութեամբ։ Կողքի սենեակները բռնված էին ապագայ ուսանողուհիներով, զանազան պատգամաւորութիւններով և մամուլի ներկայացուցիչներով։

Հանդէսին ներկայ էին նահանգապետը, Թիֆլիսի առաջնորդ Գարեգին արքեպիսկոպոսը և կօնսիստորիայի նախագահ Եփրեմ վարդ. Սուքիասեանը, ուսումնական հոգաբարձուի պաշտօնակատար Լօպատինսկին և ուրիշներ։

Տիրում էր թարմ, ոգևորիչ տրամադրութիւն։ Բարձրագոյն ուսման առաջին տարաձը յոյսեր էր ներշնչում ամենքին, որ շուտով Թիֆլիսը կունենայ և իր համալսարանը։

Առաջին խօսքը արտասանեց Զիօեվ քահանան, որի ճառի մէջ կային մի քանի աջող ձևակերպութիւններ։ Նա ողջունում էր համակրելի գործը և ընդգծում էր կանանց կրթութեան յատուկ նշանակութիւնը։

Հիմնադիրներից մէկը՝ Բալաբուեվ պատմեց, թէ ինչպէս ծագեց կանանց բարձրագոյն դասընթացքներ հիմնելու գաղափարը և ինչպէս իրագործվեց։ Մի ուրիշ հիմնադիր ներկայացրեց դասընթացքների կազմութիւնը և ծրագիրը, որից երևաց, որ կանանց մասնաւոր բարձր կուրսերը Թիֆլիսում բաղկացած են երկու բաժանմունքից բնագիտական և պատմա-բանասիրական գիտութիւններ։ Իբրև պարտադիր առարկաներ բնագիտական բաժանմունքներում աւանդվելու են՝ անօրգանական քիմիա, վերլուծողական քիմիա, ֆիզիկա, բուսաբանութիւն, կենդանաբանութիւն և համեմատական անատոմիա, օրգանական քիմիա, հիստոլոգիա և ֆիզիոլոգիա, հանքաբանութիւն, բիւրեղագրութիւն, գէոլոգիա և ֆիզիքական աշխարհագրութիւն։ Իսկ պատմա-բանասիրական բաժանմունքում աւանդվելու են՝ պատմութիւն հին-փիլիսոփայութեան, հոգեբանութիւն, ներածումն փիլիսոփայութեան, տրամաբանութիւն, պատմութիւն Արևելքի, պատմութիւն Յունաստանի, Հռոմի, ռուսաց պատմութիւն, քաղաքական տնտեսութեան հիմնական ըմբռնումները, եւրոպական ազգերի տնտեսական կենցաղի պատմութիւնը, արևմտեան եւրոպական գրականութեան պատմութիւնը, ռուսաց գրականութեան պատմութիւնը, միջին դարերի պատմութիւնը, նորագոյն ժամանակների պատմութիւնը, մանկավարժական հոգեբանութիւնը, նոր փիլիսոփայութեան պատմութիւնը, մանկավարժական սիստեմների պատմութիւնը և նոր պատմութիւնը։ Իբրև մասնագիտական առարկաներ աւանդվելու են Կովկասի պատմութիւնը և կովկասեան ազգերի գրականութեան պատմութիւնը։

Պրոֆեսոր Խարիչկով խօսեց քիմիայի ազդած նորագոյն նուաճումների և երկրի հետազօտութեան մասին։

Կարդացվեց ուսումնական շրջանի հոգաբարձու Ռուդոլֆի շնորհաւորական հեռագիրը, որը ընդունվեց ծափահարութեամբ։

Այնուհետև մի շարք պատգամաւորութիւններ և ներկայացուցիչներ արտասանեցին ողջոյնի ճառեր՝ մէկը միւսից աւելի քաջալերիչ և ոգևորիչ։

Թիֆլիս քաղաքի ինքնավարութեան կողմից խօսեց քաղաքագլխի պաշտօնակատար Ա. Խատիսեան, որը ընդգծեց մասնաւոր նախաձեռնութեամբ իրագործված համակրելի գործի նշանակութիւնը և դառնալով ուսանողուհիներին հրաւիրեց նրանց գիտնական աշխատանքի։

Թիֆլիսի ազնվականութեան կողմից ողջունեց իշխան Պ. Թումանով, ցանկալով դասընթացքներին աջողութիւն։

Վրաց գրագիտութիւն տարածող ընկերութեան կողմից ողջունեց գեն. Կազբէկ։

Թիֆլիսի Հայուհեաց Բարեգ. Ընկերութեան կողմից՝ քանի ջերմ խօսքեր արտասանեց տիկին Լիսիցեան։

Հնագիտական Ընկերութեան կողմից խօսեց հնախոյզ Ե. Տակայշվիլի, յիշատակելով նշանաւոր կին գործողների դէմքեր Կովկասի պատմութեան մէջ։

Տեխնիկական ընկերութեան կողմից խօսեց ինժեներ Ա. Բախմետեվ ողջունելով նոր մրցակիցների հանդէս գալը հասարակական ասպարէզի վրա։

Մի շարք ողջոյններ արտասանվեցին կանանց ընկերութեան, ուսանողուհիներին օգնող ընկերութեան, արտագաղութական կրթութեան ընկերութեան կողմից։ Ներսիսեան դպրոցի կողմից ողջոյնի մի քանի խօսքեր ասաց հոգաբարձու Յ. Թունունց։

«Մշակ» լրագրի կողմից խօսեց Ա. Բալանթար, ընդգծելով կանանց կրթութեան նշանակութիւնը մեր երկրի համար։

Ողջունեցին լեհական ընկերութիւնը, ժողովրդական օգտաւէտ զուարճութեան ընկերութիւնը և ուրիշներ։

Հանդէսը վերջանալուց յետոյ հիւրերը այցելեցին լսարանը, որ շինված է ամֆիթէատրոնի ձևով։

Դասընթացքների կացարանը գեղեցիկ է, բայց ոչ ընդարձակ։

Ուսանողուհիների թիւը 180 է։ Խնդիրք տուողների թիւը 210-ից անց է։ Ուսումնավճարը տարեկան 125 ր. է։

Ն. Ն. ԿՈՒՏԼԷՐ

—

«Մշակի» № 209-ի հեռագրից ընթերցողները արդէն գիտեն, որ Պետական Դումայի համար կատարված մասնակի ընտրութիւններին՝ Պետերբուրգում պատգամաւոր անցաւ ժողովրդական ազատութեան կուսակցութեան թեկնածու Ն. Ն. Կուտլեր։

Ընտրողական պայքարը, որի մասին մենք գրել էինք «Մշակում», մինչև վերջն էլ մնաց տաք, կրքոտ. մասնակցողներն էին ընդդիմադիր կուսակցութեան անդամները՝ կադէտները, աշխատաւորականները և սոցիալիստները։ Զը լսեցին ոչ հոգեմերեաններն և ոչ աջակողմեաններն ձայները. այնքան չնչին է Պետերբուրգի դեմօկրատիայի մէջ այդ կուսակցութիւնների ազդեցութիւնը, հմայքը, որ փառաւորապէս ապացուցին նախկին ընտրութիւնները։

Պայքարը տեղի ունէր ժողովր. ազատութեան կուսակցութեան դրած թեկնածուի անձնաւորութեան և ամբողջ կուսակցութեան էութեան, ծրագրի և տակտիկայի շուրջը։ Մի կողմ թողած Պետերբուրգի դեղին մամուլի տիպիք ներկայացուցչի յարձակումները Ն. Ն. Կուտլերի վրա, որոնք առանձին ազդեցութիւն չը պիտի անէին, Ն. Ն. Կուտլերի վրա ծանր հարուած իջաւ ամենից յարգված յայտնի հրապարակախօս Կ. Կ. Արսենեվի կողմից։ Անուանի հրապարակախօսը, որից ընթերցողը, յընթացս աւելի քան 40 տարվայ, սովորել է լսել կշռադատված վճիռներ, այս անգամ հրապարակ նետվեց մի մեղադրանքով, որ շատ վնասել կարող էր Ն. Ն. Կուտլերին, եթէ նա, սեղադրանքը, պարունակէր իր մէջ հշմարտութեան թոյլ հետք անգամ։ Հեղինակաւոր հրապարակախօսը մեղադրում էր ժող. ազատ. թեկնածուին, որ սա, ֆինանսական ճիւղում ծառայելիս, նպաստել է տեղական ինքնավարութեան իրաւունքների կրճատման (Ս. Ի. Վիտտէի օրով անցած օրէնքը, որ սահմանում էր տեղական ինքնավարութեան, զէմստվոյի, բիւջէի աճումը)։ Ն. Ն. Կուտլերի անմիջապէս հերքումից («Рѣчь»-ում) ընթերցողը և ընտրողը իմացան, որ որքան անպարտ է նա այս մեղադրանքում։ Պիտի ասել, որ նման մեղադրանքներ թեկնածուի անձնաւորութեան դէմ գրեթէ չէին լսվում մնացած ականաւոր հռետորների ճառերում և պայքարը տարվում էր սկզբունքային հարցերի շուրջը։

Նախընտրողական ժողովներում վէճի առարկայ էր ընդդիմադիր կուսակցութիւնները՝ Աբկա Լուշը հասարակներին—կադէտների և սոցիալիստների—տակտիկան, նրանց վերաբերմունքը դէպի Պետական Դուման։ Ժող. ազատ. կուսակցութեան ծանօթ ներկայացուցիչները պարզաբանում էին, որ հասարակութիւնը կազմակերպել կարելի է աստիճանաբար, ի միջի այլոց, Դումայի ջանքերով և նրա մէջ աշխատելով, Դումայի իրաւունքներն լայնացումով, ցանկալի ըէֆորմներ անցկացնելով կամ մինիստրական ըէֆորմների քննադատութեամբ։ Ձախակողմեանները չէին հերքում Դումայի օրէնսդրական նուազ նշանակութիւնը, բայց աւելի պնդում էին, թէ նրա ամբիոնը պիտի ծառայէ իրանց մտքերը տարածելուն, կազմակերպելով հասարակական-աշխատաւորական խմբերը։

Պակաս չէին յարձակվում և Պ. Ն. Միլիւկովի վրա, նրա Լօնդօնում արտասանած յայտնի ճառի առիթով։ Անշուշտ անարդար էր ռուս պատգամաւորը, երբ իր ճառի մէջ նա խօսեց ամբողջ ռուս բնդդիմադիր կուսակցութեան կողմից։ Զէ՞ որ օպպոզիցիան իր մէջ պարունակում է բացի սահմանադիր միապետականներից (կադէտներ և մասամբ ժողով. աշխատաւորականներ և սոցիալիստներ, որոնք առ այժմ սուր բնաւորութիւն չեն տալիս «միապետական» սկզբունքին) և բացարձակ հանրապետականներ (սոց.-յեղափոխ. և սոց.-դեմօկրատներ)։ Այո, ժողովրդական ազատութեան կուսակցութիւնը, որպէս սահմանադրական-միապետական մի քաղաքական կուսակցութիւն, ցանկալ կարող է, որ վերջապէս ճանաչվին նրա քննադատական-ընդդիմադիր իրաւունքները, որ կուսակցութիւնը համարվի օրինական և ոչ-հակապետական, կրամ՝ ընկերակցութիւն, ինչպէս այժմ է. և աններելի էր Պ. Ն. Միլիւկովի կողմից ի մի խառնել բոլոր օպպոզիցիոն տարրերը։

Չը նայած բոլոր յարձակումներին՝ և այս անգամ յաղթանակը տարաւ ժող. ազատ. կուսակցութիւնը։ Արդարացի լինելու համար պիտի խոստովանել, որ այդ յաղթութիւնը մայրաքաղաքի քիչ-շատ դէմօկրատական խաւերինն էր. սեփականազուրկ աշխատաւորը սակաւ ընտրողական ձայներ ունի՝ շնորհիւ զանազան սահմանափակումների և «բացառութիւնների»։

Նորընտիր պատգամաւոր Նիկոլայ Նիկոլայևիչ Կուտլերը ծնվել է 1859 թ-ին և անցել է պետական ծառայութիւնը սկսած հարկային տեսչից մինչև մինիստրի առաջնանը (Ս. Ի. Վիտտէի կաբինետում)։ Բիւրօկրատիկ ասպարէզը նա թողեց մինչև առաջին Դումայի գումարվելը, երբ անդամաձայնութիւններ առաջ եկան առաջին սահմանադրական կաբինետում հողային ծրագրի առիթով։ Կարևոր է նկատել, որ վերջերս քիչ չէին «պատահական» (случайный») պետական գործիչներ, որոնք արին գլխապտուտ կարիերա, շնորհիւ զանազան պատահարների, ինտրիգների կամ հզօր ձեռքերի աջակցութեան։ Այդ կարգի գործիչներից չէր Ն. Ն. Կուտլերը, որ առանց «կապերի», այլ բացառապէս շնորհիւ իր տաղանդի, հասաւ համեմատաբար երիտասարդ հասակում մինիստրական աստիճանի (44—45 տարեկան)։ Նա այնքան անբիծ էր իր ծառայութեան մէջ, որ անգամ «մասնաւոր», բայց տէրունական «նրուկին մօտ, «Россія» թերթը նրա մասին կարողացաւ միայն մի մեղադրանք ասել, թէ իբր Կուտլերը ծառայել է «Ֆելդֆեբել» Սլօբոդզիկովի իշխանութեան տակ։

Նոր մարդ չէ Ն. Ն. Կուտլերը և Տաւրիկեան պալատում. նա եղել է անդամ երկ. Դումայի՝ նոյն Պետերբուրգից։ Անշուշտ հետաքրքիր ընթերցողները յիշում են նրա կշռադատված զեղեցիկ ճառերը բիւջէտային և հողային հարցերի վերաբերեալ։ Երբորդ Պետական Դուման յանձին այս պատգամաւորի ձեռք է բերում մի տոկուն, նշանաւոր ոյժ նամանաւանդ ամենակարևոր հարցում՝ բիւջէտային և հարկահանութեան։ Ն. Ն. Կուտլերը երկար ժամանակ վարել է ուղղակի հարկերի բաժանմունքի տեսչի պաշտօնը և մօտից ծանօթ է առս ժողովրդի հարկաւորութեան ոյժին, քաղաքների զեմստվոների և համայնքների տնտեսական կոմին։ Պետ. Զաքարեան

Յ. Կ. ԱՅՎԱԶՕՎՍԿԻՆ ՈՐՊԷՍ ՄԱՐԴ ԵՒ ՔԱՂԱՔԱՑԻ

—

«Русск. Старина» ամսագրի սեպտեմբերի գրքի մէջ կենսագրական հետաքրքրական տեղեկութիւններ են բերված Այվազովսկու մասին։

Այվազովսկին կարծես երկու միմեանցից տարբեր անձնաւորութիւն էր ներկայացնում. գեղարուեստական գործունէութեան մէջ նա մի վարպետ էր, որը անյողդողդ հետևում էր իր հաստատուն հայեացքներին գեղարուեստի մէջ։ Կարելի է ասել, որ Այվազովսկին մեծաւ նոյն հայեացքներով գեղարուեստի վրա, որ նա ունէր պատմութեան ժամանակից։

Այլ մարդ էր Այվազովսկին հասարակական կեանքի մէջ։ Այստեղ մենք տեսնում ենք նրան շուտով փոփոխող իր կարծիքները, միշտ մի որևէ մարդու ազդեցութեան տակ գտնվող. և նայելով թէ յայտնի բոպէում ով ամենից շատ ազդեցութիւն ունէր նրա վրա, նրա համեմատ էլ նա փոխում էր իր հայեացքները կեանքի վրա։

Դրա գլխաւոր պատճառը նրա ընդհանուր կրթութեան պակասութիւնն էր։

Դեռ ուսանողական տարիներից նա ծանօթութիւն էր կապել ռուսաց նշանաւոր գրողների հետ, և ահա այդ շրջանը ծնեցրել էր նրա մէջ անվստահութիւն դէպի իր անձը, և ինքն յարգող լինելով ամեն մի մտաւոր ոյժ՝ ընկնում էր այս կամ այն անձի ազդեցութեան տակ։

Մի ժամանակ նրա վրա մեծ ազդեցութիւն ունէր նրա ազգականը, մի դատարկ մարդ։ Ապա սկսվեց ուրիշ անձանց ազդեցութիւնը։

Նրա վրա ազդեցութիւն են ունեցել և այնպիսի անձինք, որպէս Մեծ Իշխան Կոնստանտին Նիկոլայևիչ, կոմս Լորիս-Մելիքով, Միլիուտին, իսկ վերջին տարիները սկսվեց Դր. Զանչեանի ազդեցութիւնը։ Եւ այդ միմեանց հակառակ ազդեցութիւնների շնորհիւ Այվազովսկու ընթացքի մէջ նկատվում է մի տարօրինակ անկայունութիւն և տատանումն։

Այվազովսկու հայեացքների այդ խառնաշփոթութիւնը երևան եկաւ մանաւանդ 70-ական թւականներին, երբ Թէօդոսիա քաղաքի ապագայ «հայրը», որի անունով էին անուանում քաղաքը, պարտութիւն կրեց զեմստվոյի ընտրութիւններում։

Զայրացած «ապերախտ» ընտրողների վրա, Այվազովսկին զինվեց ամբողջ զեմստվոյի դէմ և գնաց Լորիս-Մելիքովի մօտ, տանելով նրան մի գրութիւն զեմստվոն ջնջելու մասին, որովհետև նրա մէջն էր տեսնում Այվազովսկին բոլոր չարիքի արմատը։ Ի պատիւ Այվազովսկու պէտք է ասել, որ, Լորիս-Մելիքովի հետ խօսակցելուց յետոյ, որը բացատրեց նրան զեմստվոյի դերը, Այվազովսկին ոչնչացրեց պատրաստված գրութիւնը և տուն վերադարձաւ արդէն որպէս զեմստվոյի կատաղի կողմնակից։

Ահա տատանման մի այլ օրինակ Այվազովսկու հայեացքների մէջ։

Վախենալով խախտել իր հանգստութիւնը, Այվազովսկին աշխատում էր հեռու մնալ իր ազգակիցներից և առհասարակ հայութիւնից։

Մրայթ 80-ական թւականներից, երբ նա Մոսկվա գնաց և Փանահարեանների տունը ծանօթացաւ Դրիգոր Զանչեանի հետ, նրա մէջ սկսվեց խիստ փոփոխութիւն, և նա դառնում է իր ազգի գլուխգոր անդամը։

Այդ փոփոխութիւնը Այվազովսկու հայեացքների մէջ երևաց 1897 թ-ին, երբ Սասունում տեղի ունեցան թիւրքերը և քիւրդերի գազանութիւնները և հազարաւոր հայեր թիւրքաց լծի՝ զոհ գնացին։

Այվազովսկին, որ առաջ անտարբեր էր դէպի թիւրքաց հայերի վիճակը, այժմ չը կարողացաւ անտարբեր մնալ և առաջիններից մէկն էր, որ արձագանք տուեց Զանշեանի հրաւէրին՝ մասնակցել «Եղբայրական օգնութիւն» գրքին։

Դրանով չը բաւականանալով, Այվազովսկին հնարաւոր չը համարեց իր համար՝ կրել թիւրքական զքանշանները և դուրս շպրտեց այդ նշանները, հաղորդելով դրա մասին թիւրքաց դեսպանին։

ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ ԳԱՒԱՌԻՑ

—

Սարիղամիշ, 25 սեպտ.

Այսօր Սարիղամիշի վրայով երկիր անցաւ թիւրքահայ գաղթականների մի մեծ խումբ, որը բաղկացած էր 520 հոգուց։

Երկու օր է, ինչ Կարսից եկած վարչական յանձնախմբի ղեկավարութեամբ նիստեր են տեղի ունենում, որոնք վերաբերում են հետևեալ հարցին։ Ահա մի տարի է, ինչ Սարիղամիշը գտնվում է տեղիս զինուորականութեան (Կուբինսկի գնդի) իրաւասութեան տակ. այդ գունդն է կարգադրում տեղիս բոլոր գործերը, չը նայած որ տեղումս նստում է մեր շրջանի նահանգապետը։ Ինչպէս երևում է, այս նիստերը վերջապէս պիտի լուծեն այն հարցը, թէ տեղական գործերը պիտի կարգադրվեն այդ զինուորականների՞ թէ՞ վարչական մարմինների կողմից։ Այդ հարցի լուծումն ահա քանի տարի է ձգձգվում էր։

Լուր է պատում, թէ Սարիղամիշը, որը մինչև այսօր գիւղ էր կոչվում, սրանից յետոյ լինելու է գիւղաքաղաք։ Կ. Ն.

—

Դաշքուլաղ (Նուխու գ.), 23 սեպտ.

Հինգ-վեց ամիս էր, ինչ դաշքուլաղեցին զանգակի ձայն չէր լսել։ Նրա եկեղեցին փակ էր։ Դահանները իրաւունք չունէին մեռել թաղելու, երեխայ մկրտելու, որովհետև չեն կարողացել ժամանակին էջմիածատական տուրքը հասցնել։ Եւ ահա օգոստոսի 29-ին լսվեցին զանգակների ձայներ։ Գիւղացիները զարմացած՝ վազեցին եկեղեցի, իմանալու թէ ինչպէս բացվեց փակ եկեղեցին...։ Եւ նրանք տեսան եկեղեցում Նուխու յայնոյող Եղիշէ վարդ. Ահարոնեանցին և Արշակ քահ. Փալչեանցին, որոնք եկել էին Նուխուց։

Վարդապետը, քարող խօսելուց յետոյ, առաջարկեց ժողով անել և վերջ տալ առկախ մնացած խնդրին։ Այնպէս, ուրեմն, եկեղեցին վերաբացվեց և ընտրվեցին նոր երէցփոխ և հոգաբարձուներ։ Մեր եկեղեցին առաջին անգամն է, որ հոգաբարձուներ ունեցաւ։ Մինչև այսօր մի երէցփոխ է կառավարել եկեղեցին և ինչպէս կամեցել է՝ այնպէս էլ արել է...։

Մ. Բէգլարեան

ՆԱԽԹԱՑԻՆ ԱՇԽԱՐՀԻՑ

—

Բալախանի, 21 սեպտեմբերի

Ըստ երևոյթին այսուհետև նաւթահանքերում խաղաղութիւնը լիակատար պիտի լինի։ Բալախանու կեանքը թունաւորողներից ամենաականաւորը՝ մի խումբ շրջակայ գիւղացիներ են, որոնք նաւթահանքերի թագաւորներն են կոչվում և որոնք մեծ ու փոքր նաւթարդիւնաբերող ֆիրմաներից պաշտօնական հարկ են ստանում՝ 300—3000 ր. տարեկան։ Այդ մի խումբ տեղացի թուրք գիւղացիները զանազան մութ միջոցներով կարողացել են այս կամ այն նաւթահանքի պահպանութիւնը, անձեռնմխելիութիւնը իրանց հովանաւորութեան տակ առնել՝ սատանալով նաւթահանքատիրող կառավարիչներից, ինչպէս ասացի, 300—3000 ր. ռոճիկ։ Այդ «զօշիները» Բալախանու ոստիկանութեան կողմից պաշտօնապէս ճանաչված են եղել և են մինչև այսօր որպէս պատասխանատու պահապաններ (ответ. караулчикъ)։ Սակայն ոչ մի նաւթահանքում այդ «պատասխանատու պահապաններից» ոչ մէկը չէ երևացել և չէ էլ երևում, այլ իւրաքանչիւրը ամսական իր ռոճիկն ստանալով ազատ ու հանգստաւէտ ապրել է։ Իսկ նա, ով չէ տուել «հարկը» և արհամարհել է այդպիսիներին, նրա նաւթահանքից շաբաթով չէ տուել «հարկը» և արհամարհել է այդպիսիներին, նրա նաւթահանքից շաբաթական գողութիւններ են կատարվել։ Այդպիսիները թէև վստահացել են ոստիկանութեան, այսինքն կառավար. պետական տեղային կազմի վրա, և չեն վճարել, բայց վերջ ի վերջոյ ստիպված են եղել վճարել հարկը ու այդպիսով գողութիւններին վերջ դնել։

Ո՞վ կը համարձակվեր չը վճարել դրանց։ Մերժման դէպքում հէնց նոյն գիշերը կամ գործիքներ պիտի գողացվէին (100—500 ր. արժէքով) կամ որևէ դժբաղդութիւն պատահէր ծառայողների հետ։ Ահա նրանց ամբողջ պատասխանատու պահպանութեան նշանաբանը։ Իսկ երբ նրանք ստանում են իւրաքանչիւր ամիս իրանց մասը, այնուհետև ոչ գողութիւն է կատարվում, ոչ փոր-ձանք և ոչ էլ պահապան է հարկաւոր նաւթահանքում։ Ուստի նաւթահանքի կառավարիչները, ստիպված, պաշտօնապէս վճարում են ահագին գումարներ ու այդպիսով նսեմացնում թէ իրանց գիտակցութիւնը և թէ արհամարհանքով նայում Բալախանու ոստիկանութեան ամբողջ կազմին։ Ոստիկանապետի պահանջը (ըստ պետական օրինաց) այնքան զգալի և պարտաւորեցուցիչ չէ, որքան «ղօշի» անունով պատասխանատու պահապաններինը։

Ըստ երևոյթին՝ իր կոչման բարձրութեան վրա կանգնած քաղաքապետ Մարտինովին ծանօթացրել են իրերի այդ տեսակ դրութեան հետ, և շատ հաւանական է, որ հէնց իր ներկայ օգնականը ծանօթացրած լինի, քանի որ նա ևս Բալախանում ոստիկանապետ է եղել, ուստի, ինչպէս լսում ենք, պատասխանատու պահապանների հարցը առօրեայ կենսական հարցերի շարքն է անցել և որոշված է վերջ դնել մի այլ կառավարութեան կամ աւելի խիստ ոստիկանութեան ինքնակոչ կազմին։

Մարտինովը վերջին օրերում պտտեց Բալախանու շրջակայ գիւղերը, ընդհանուր գաղափար կազմեց և այժմ դիմել է միջոցների, տեղեկութիւններ ժողովելու թէ ովքե՞ր են պատասխանատու պահապանները և ի՞նչ է նրանց նշանաբանը։

Եթէ այդ ևս աջողվեց Մարտինովին, այն ժամանակ պիտի ասել, որ Բալախանին ևս կանցնէ Բագուի շրջանը իր հանգիստ կեանքով։ Ս. Գարագաշ

ՆԵՐԲԻՆ ԼՈՒՐԵՐ

—

✦ Ի յիշատակ ռուս բանաստեղծ Ա. Կոլցովի ծննդեան 100-ամեակի, որ լրանում է այս տարվայ հոկտեմբերի 2-ին, մտադրութիւն կայ Թիֆլիսում կազմել գրական երեկոյթ բանաստեղծի անուան։

✦ Մոտիկ ապագայում Կովկաս են գալու մի խումբ արտասահմանեան կապիտալիստներ։ Յիշեալ անձինք նպատակ ունեն մօտիկից ծանօթանալ Կովկասի հետ ընդհանրապէս՝ ապագայում շահագործելու համար։ Առանձին հակումն օգտվելու Կովկասի բնական հարստութիւններից ցոյց են տալիս գլխաւորապէս գերմանացիները։

✦ Զէմստվային խնդրով զբաղվող նահանգական մարմնի բացումը, ինչպէս յայտնի է՝ նշանակված է հոկտեմբերի 5-ին։ Դումայի նիստերի դահլիճը, ուր տեղի են ունենալու այդ նիստերը, կը թողնվին միայն մարմնի անդամները, նահանգապետից հրաւիրված անձինք և մամուլի ներկայացուցիչները։ Հասարակութեանը սրահներում թոյլ կը դրվին միայն յատուկ տոմսերով, որ կը լինեն քաղաքագլխի պաշտօնակատարի մօտ։ Նահանգական մարմնի նիստերին բացի սովորական գործերից՝ կը ներկայացվի նաև առանձին զեկուցագիր ի պաշտպանութիւն նահանգում երկաստիճան զէմստվո մացնելու։

✦ Երէկ, սեպտեմբերի 28-ին, Թիֆլիսի նահանգական դատարանում նշանակված էր մի գրական գործ։ Ոմն Սայեաթ-Նովա մեղադրում էր «Մշակի» ժամանակաւոր խմբագիր Հ. Առաքելեանին զրպարտութեան և վիրաւորանքի մէջ։ Հ. Առաքելեանին պաշտպանում էր Եսայի Դոլուխանեան, որի պաշտպանողական փայլուն մի ճառից յետոյ դատարանը արդարացրեց Հ. Առաքելեանին։ Մանրամասնութիւնները վաղը։

✦ Օրեցնում ենք, որ այսօր, երեքշաբթի, երեկոյեան ժամը 8-ին, Կովկասեան Գիւղատն.-Տնայնագործական Ընկ. ընդհանուր ժողովը։

✦ Առաջ բերելով Ամենայն Հայոց Կաթողիկոսի ծրագիրը՝ լուծման սպասող հարցերի մասին, «Тиф. Лист.» լրագիրը հաղորդում է, թէ իբր Կաթողիկոսը մտադիր է գումարել եկեղեցական ժողով։ Որքան գիտենք, այդ լուրը սխալ է միանգամայն։ Եկեղեցական ժողովի գումարումը շատ հեռու ապագայի գործ է և կարիք ևս չը կայ, քանի որ Կաթողիկոսի ծրագիրը վերաբերում է զուտ վարչական հարցերին։

✦ Թիֆլիսի փոխադարձ վարկի ընկերութիւնը, նպատակ դնելով սեփական շինութիւն կառուցանել, Թայիրեանից գնեց 150,000 ռուբլով մի հողաբաժին Սօլոլակի փողոցում, Սէրգէեվսկայա փողոցի հանդէպ։ Հողաբաժինը ձեռք բերելու և շինութիւն կառուցանելու համար ընկերութիւնը յատկացրել է 250,000 ռուբլի։ Շինութեան նախագծի և նախահաշուի կազմելը յանձնված է արխիտեկտոր Օհանջանեանին, որի նախագծով կառուցվեցին պետական բանկի Թիֆլիսի բաժանմունքի նոր հակայ շինութիւնը, Արամեան հիւանդանոցի շէնքը և այլն։ Տունը լինելու է երկայարկանի. ներքևում լինելու են խանութներ, իսկ վերին յարկում՝ ընկերութեան շինութիւնը ահագին դահլիճով։

✦ Սեպտեմբերի 25-ին այն յատուկ մասնաժողովը, որ պաշտօն ունի զբաղվել էլեքտրաքարշի գործերով, քննելով էլեքտրաքարշի ծառայողների բողոքագիրը նոր վերատեսչի դէմ, գտաւ, որ ինքը իրաւասութիւն չունի լուծել տնտեսական խնդրին վերաբերող հարցերը։

✦ «Б. Ж»-ն գրում է, որ այս օրերս ուժեղ պահակախմբի հսկողութեամբ Բուքթայիի բանտից Բաթում են տարել բժիշկ Տրիանդաֆիլիդիսին սպանողներից մինին ևս, Բամիշվիլուն։ Նա այժմ բանտարկված է զինուորական բանտում։

✦ Այս օրերս իր պարապմունքները կը սկսէ մինչվարչական մասնաժողովը Վլադիկավկազի երկաթուղագիծը պետական հաշուով գնելու հարցի առիթով։

✦ Կիրակի, սեպտեմբերի 27-ին, Նորաշէնի եկեղեցու բակում տեղի ունեցաւ բարեգործ Կարապետ Վարդանեանի թաղումը։ Հանգուցեալի ազգականներ, բացի իր մերձաւորներից, վերջին յարգանքը մատուցանելու համար շտապել էին ներկայացուցիչներ այն հիմնարկութիւններից, որոնց հանգուցեալը նուիրաբերել էր։ Նորաշէնի ուսումնարանի հոգաբարձական և ուսուցչա-

կան կազմի ներկայութիւնը իր աշակերտուհիներով առանձին ուշադրութիւն էր գրաւում. ներկայ էր և Թիֆլիսի, թեմի առաջնորդը, որը պատարագի միջոցին մի դամբանականով թւեց և դրուատեց հանդուցեալի բարեգործութիւնները։ Թիֆլիսի հայոց ծխական ուսումնարաններին, բարեգործական ընկերութիւններին, պետական մի քանի դպրոցների, թուրքաց և հրէաների ուսումնարանին նուիրաբերող 65,000 ռուբլու հասնող կտակի մէջ աչքի էր ընկնում Վեհափառ Կաթողիկոսի տրամադրութեան տակ թողած 20,000 ռուբլին՝ յատկացվելու համար Մուշի ս. Կարապետի վանքին և ուսումնարանին և Նորաշէնի ուսումնարանին կտակած 12,000 ռուբլին, որը եկաւ փրկելու այդ ուսումնարանը փակման վերահաս վտանգից։

◆ Հանգուցեալ Եգօր Զոհրաբեանի կտակի իրագործումը, ինչպէս հաղորդում են մեզ, մօտ է իր վախճանին։ Կտակի համաձայն, կտակակատարները 1910 թ. յունիսի 10-ին պէտք է ստանան հանգուցեալի առաջարկան տան ընկեր Մինաս Սուլթանեանից 70,000 ռուբլի, որ հանգուցեալը յատկացրել է Թաւրիզում թեմական դպրոցի շինութեան գործին։ Արդ, կտակակատարներ Հ. Առաքելեան, Ս. Սուլթանեան և Մ. Սուլթանեան հեռեալ համաձայնութիւնն են կայացրել Ատրպատականի թեմական առաջնորդ Կարապետ վարդապետի հետ։ Փոխանակ նոր շէնք կառուցանելու, կտակակատարները գնելու են այն շինութիւնը, որ այժմ պատրաստ կայ Թաւրիզում, «կենտրոնական դպրոց» անունով, որ ձեռք է բերվել Թաւրիզի ազգային վարչութեան ձեռքով 33,000 ռ.։ Կտակակատարները փոխադարձ համաձայնութեամբ Թաւրիզի հոգաբարձութեան հետ պէտք է մի որոշ գումարով գնեն այդ շէնքը (իսկ անհամաձայնութեան դէպքում մի այլ շէնք) և մնացած գումարը, ինչպէս և գնման յատկացված գումարը գնեն արքունական բանկի մէջ ի շահեցումն և տոկոսիքն ամեն տարի տան թեմական կենտրոնական դպրոցին, մինչև որ բարեպատեհ առիթով ձեռք կը բերվեն կամ Թիֆլիսում կամ Թաւրիզում անշարժ կալուածներ, որոնց արդիւնքը աւելի մեծ լինի, քան բանկային տոկոսիքը։

◆ Վեհ. Հայրապետի օծման առիթով սեպտ. 27-ին, ս. Սարգսի եկ.-ծխ. դպրոցում, կայացաւ զր.-մանկական ցերեկոյթ։ Ներկայ էին բազմաթիւ հանդիսականներ։ Դպրոցի ուսուցիչ Յ. Աղաբաբ համառօտակի բացատրեց ցերեկոյթի նպատակը։ Ապա սաները արտասանեցին ոտանաւորներ։ Ցերեկոյթի ընթացքում մէջ ընդ մէջ երգում էր գպրոցի երկսեռ խումբը զանազան մանկական երգեր։ Ցերեկոյթը գեղեցիկ տպաւորութիւն թողեց հանդիսականների վրա, և ծնողներից ոմանք խոստացան այսուհետև ուշադիր լինել այդ դպրոցի գործերին։ Գանվեցին և այնպիսիները, որոնք չքաւոր երեխաների օգտին դրամական նուէրներ արեցին։ Այս տարի այդ դպրոցում բացվել է I բաժանմունք, ուր դեռ ևս 10 հոգու տեղ կայ։

◆ Մեզ յայտնում են, որ մի 11—12 տարեկան վերին աստիճանի որբ երեխայ (տղայ), որը անցեալ տարի պատրաստվել, աշխատութեամբ քննութիւն էր բռնել և ընդունվել Թիֆլիսի բէալական դպրոցի առաջին դասարանը, բայց և որը, ուսման վարձը վճարել չը կարողանալուն համար, արձակվել էր դպրոցից, այս տարի նորից պատրաստվել և մտել է նոր առևտրական ուսումնարանի երկրորդ դասարանը։ Սակայն այդ ընդունակ երեխան նորից ուսումնարանից դուրս վռնտվելու սպառնալիքի տակ է գտնվում, որովհետև նա դարձեալ զուրկ է ուսման վարձը վճարելու միջոցներից։ Եթէ երեխան կարողանայ դէթ առաջին տարվայ վարձը (90 ռուբլի) վճարել, մեծ հաւանականութիւն կայ, որ գալիք տարիների համար նրան բոլորովին ազատեն ուսման վարձից։ Բարեգութ անձանց ուշադրութիւն է հրաւիրվում այդ չքաւոր որբի վրա և խնդրվում է օգնութեան հասնել, որպէսզի այդ չափազանց ընդունակ մանուկը չը զրկվի ուսումից։ Նպաստները կարելի է յանձնել «Մշակի» խմբագրատանը Պետ. Զաքարեանին կամ Ռ. Խան-Ազատին։

◆ Սեպտ. 26-ին Գ. Լենոան իր կուրսերում դասախօսութիւն կարդաց՝ նիւթ ունենալով «գեղարուեստի ծագումը և աղբիւրները»։ Նրա՝ յետագայում կարդալիք մի շարք դասախօսութիւնների նիւթ են լինելու՝ 1) նկարչութիւնը, 2) քանդակագործութիւն և 3) ճարտարարուեստը։

◆ «Մագութ» նաւթային ընկերութիւնը, որի գլուխն է կանգնած Պարիզի Բօտշիլդը, հրատարակել է իր 11-րդ տարվայ (1908 թ.) հաշիւը։ Ընդհանուր եկամուտ եղել է 47,730,000 ր., որ թէև նախանցեալ տարվանից 3½ միլիոն պակաս է, բայց զուտ օգուտը՝ 1,750,000 ռուբլի է։ 1907 թուից 23,500 աւել է, որովհետև կըրճատվել են ծախքերը։ Բաժնետէրերի զուտ օգուտը հաւասար է 8%-ի, հիմնական դրամագլուխը՝ 6 միլիոն։

◆ «Մշակի» № 212-ում տպված՝ Յակոբ Գենջեանի յօդուածի վերնագիրը սխալմամբ լոյս է տեսել «Մեռնող հասարակութիւն», փոխանակ լինելու՝ «Մեռնող հասատութիւն»։

ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԿԵԱՆՔԻՑ

—

◆ «Торг. Пром. Газ.» լրագրում տպված է.«Ի նկատի ունենալով որ բօրսային շրջաններում շարունակվում է պտտել այն լուրը, որ իբր թէ մտադրութիւն կայ նոր վիճակախաղային փոխառութիւն հրատարակել, ֆինանսների մինիստրութիւնը կտրականապէս յայտարարում է, որ ոչ մի այդպիսի մտադրութիւն գոյութիւն չունի։ Վերոյիշեալ լուրերը, ակներևաբար, շահադիտական ծագում ունեն և տարածվում են, որպէսզի գոյութիւն ունեցող խաղարկու փոխառութիւնների գները պակասեցնեն»։

◆ Մոսկվայի քաղաքագլխի օգնական Բրեանովի մի զեկուցում է կազմում քաղաքային դումային ներկայացնելու համար, որի միտքն այն է, թէ, ինչ միջոցների պէտք է դիմել քաղաքի խրօնիքական դէֆիցիտները ծածկելու համար։ Մոսկվա քաղաքի եկամուտների և ծախսերի նախահաշիւը 1910 թուականի համար, չը նայելով ամեն տեսակ կրճատումներին ծախսերի մէջ, տալիս է կրկին 1,500,000 ր. դէֆիցիտ։ Նախկին տարիների նախահաշիւները նոյնպէս գործադրվել են մէկ միլիոն դէֆիցիտով։ Զեկուցում կազմողը ապացուցանում է, որ քաղաքային ֆինանսները անելանելի արգելքի են հանդիպել, և արտակարգ ջանքեր են հարկաւոր՝ փրկելու համար քաղաքային ֆինանսները։

◆ Նախատպագրիչ Իվան Թէօդորովի և բժիշկ Ֆ. Պ. Հասլի արձանների առաջիկայ բացման և բանաստեղծ Կոլցովի ծննդեան հարիւրամեակի առիթով քաղաքային բոլոր դպրոցներում հոկտեմբեր և նոյեմբեր ամիսների ընթացքում բացառական ընթերցանութիւններ կը լինեն այդ անձանց նշանակութեան և գործունէութեան մասին։

◆ Սեպտեմբերի 20-ին բացվեց Խարկովի նահանգական ազնականութեան ժողովը, որը պէտք է վերջնական ձևով վճռէր զեմստվային ու հասարակական յայտնի գործիչներ և առաջին Պետական Դումայի անդամներ Մ. Կովալևսկուն, Ն. Ա. Գրեդէսկուլին, Մ. Դ. Դէլարինին, Գ. Մ. Լենտվարեվին և Ֆ. Ի. Իվանիցկուն իրանց շրջանից արտաքսելու հարցը։ Արտաքսման շարժառիթը Վըբօրգեան կոչի ստորագրելն է, և Խարկովի ազնականութիւնը «ակներև անպատիւ վարմունք» է համարում նրանց այդ գործը։ Այդ առիթով Գ. Մ. Լենտվարեվ մի ընդարձակ նամակի մէջ, որը տպվեց «Утро» լրագրում, ասում է ի միջի այլոց, որ հէնց այն ազնականները, որոնք մտադրութիւն ունեն դուրս անել վերոյիշեալ անձանց, 1905 թ-ի վերջում իրանք էին Վըբօրգեան կոչի մտքին շատ մօտ պահանջներ անում։ Աւելի ևս խիստ գրութիւն է ուղարկել ազնականների ժողովին Մ. Մ. Կովալևսկին։ Նրա մէջ նա մատնացոյց է անում, որ ազնականներից շատերը յիրաւի անպատիւ ընթացք են ունեցել, օրինակ վատնումն, յափշտակութիւն և այլն, և ազնականները նրանց չեն դուրս հանել իրանց շրջանից, և բաւական էր, որ մի քանի անձինք ազնականներից ասպարէզ գային ի պաշտպանութիւն ժողովրդական իրաւունքների, և ահա ազնականների ժողովը ուզում է վռնտել նրանց իր շրջանից։

Հեռագիրն արդէն լուր բերեց, որ ազնականների ժողովը որոշեց դուրս հանել վերոյիշեալ անձանց իր շրջանից։ («Р. В.»)

◆ Կիրակի, ամսոյ 27-ին, Մոսկվայում տեղի պիտի ունենային մասնակի ընտրութիւններ Պետական Դումայի մէկ անդամ ընտրելու համար, փոխարէն հանգուցեալ Պլեվակօյի։ Ընտրութիւնները լինելու են առաջին կուրիայից՝ խոշոր անատէրերի և այլ ցենզ ունեցողների, և անուշտ պիտի անցնի հոկտեմբերականների թեկնածու Ն. Սչենկովը, որը՝ իր յայտարարելով՝ պիտի Դումայում աշխատէ յօգուտ ազդունադարձութեան զարգացման։ Նախընտրողական ժողովներում այդ թեկնածուն ոչ շնորհք, ոչ տաղանդ ու պատրաստականութիւն ցոյց տուեց, բայց ընտրողների մեծամասնութիւնը, հլու հպատակ հոկտեմբերական կուսակցութեան, նրան ձայն կը տայ, փոխանակ անցկացնելու աւելի արժանաւոր թեկնածուին՝ Ն. Ն. Շչեպկինին, որը ժողովր. ազատ. կուսակցութեան մարդն է։

ԳԻՏՈՒԹ., ԳՐԱԿԱՆ., ԳԵՂԱՐ.

ԹԱՏՐՕՆ ԵՒ ԵՐԱԺՇՏՈՒԹԻՒՆ

—

«Զաւակներ» եւ «Փողոցի աղջիկը»

Թիֆլիսի դրամատիկական բեմի վրա այդ պիէսները կրկնվեցին։ Եւ երկրորդ անգամ հասարակութիւնն աւելի շատ էր, քան առաջին անգամ։

Պիէսները ունեն բեմական կողմեր և մի քանի գունաւոր ուժեղ դերեր, որոնց մէջ կարող են փայլել դերասանները, մանաւանդ կանացի դերերում։

Երկու պիէսների մէջ էլ վերցված են կենսական գծեր, բայց առաջին պիէսը աւելի ընդարձակ և խոր հետաքրքրութիւն է շարժում, քան երկրորդը, որի մէջ մանաւանդ շատ մեծ դեր է խաղում պատահականութիւնը։

«Զաւակներ» պիէսի մէջ չօշափված է այն խնդիրը, որ ընտանիքի քայքայումը առաջ է բերում մեծ դժբաղդութիւն նրա անդամների համար։

Պիէսի սկզբում նկարագրված է բժիշկ Կրուչեվսկու բաղաւոր ընտանիքը, որի մէջ տիրում են փոխադարձ սէր, յարգանք, ներքին խաղաղութիւն։ Եւ այդ բաղդաւորութիւնը կը շարունակվէր, եթէ հանդէս չը գար մի նոր հանգամանք։ Բժշկի կինը իրան համար անսկատելի կերպով սիրահարվում է իր ամուսնու օգնականի՝ Մօլօտովի վրա և բոլորովին անձնատուր լինում իր նոր զգացմունքներին։ Բժիշկը դուրս է անում կնոջը իր տնից և մի քանի ժամանակից յետոյ պսակվում է մի ուրիշի հետ։ Կինը, վերցնելով հետը իր աղջկան, հեռանում է տնից, բայց բաղդ չէ գտնում, որովհետև նրա սիրած մարդը սկսում է սառչել դէպի նա։ Սկսվում են տանջանքներ ամեն մէկի համար։ Ընտանեկան հաւասարակշռութեան քայքայումը դժբաղդութիւն է բերում բոլորի համար։

Պիէսի հեղինակն է մի կին, Ժուկովսկայա։

«Փողոցի աղջիկը» պիէսի մէջ յայտնված է այն միտքը, որ յայտնի է հայկական առածով, թէ «բօշայից փաշա չի դուրս գայ»։ Պիէսի հեղինակ Պերժինսկիյ վերցրել է Վարշավայի փողոցի աղջիկներից մէկին և դարձրել նրան մի հարուստ կալուածատէրի սիրուհի։ Կալուածատէրը Լօնսկին կամենում է այդ աղջկան բարձրացնել և կապել իր հետ, բայց աղջիկը ուրիշ ճաշակ ունի և շատ շուտ նա կապվում է սպասաւոր Ֆրանեկի հետ, որի խօսքերը և հայհոյանքները աւելի մօտ են նրա սրտին և հակացողութիւններին։

Պիէսը հանդէս է բերում գործող անձերի ընդհարումների տեսարաններ և վերջանում է Լօնսկու անձնասպանութեամբ։

Դերակատարներից աչքի է ընկնում նախ Բօրսկայա, որ մեծ հմտութեամբ կատարում է փողոցի աղջկայ և բժշկի երկրորդ կնոջ Դարայի դերերը։ Բօրսկայա մտնում է դերի մէջ, մերթ ներկայանում է իրրև մանկական անմեղ ընաւորութիւն, զուարթ քրքիջով և գեղեցիկ ժպիտով, մերթ իբրև վայրենի ոյժ, մերթ թախծի ենթակայ մի անձնաւորութիւն։ Կրեչետովա խելացի կատարեց բժշկի կնոջ դերը, արտայայտելով մի շարք բաղդրեալ զգացմունքներ։ Սարնեցկայա (նրա աղջկայ դերում) հանդէս բերեց դրամատիկական ոյժ։ Տղամարդկանցից յիշատակենք Բարատովին, որը չափազանց յայտնի է անցեալ տարվայ իր բազմատեսակ խաղով, և Դավիդով, որ բաւական աջող կատարում էր Լօնսկու դերը։

Անսամբլը թողնում է զոհացուցիչ տպաւորութիւն։ Սիրող

—

«Զ ա զ ա»

Օպերային խումբը հետզհետէ գրաւում է երաժշտասէր հասարակութեան ուշադրութիւնը և համակրութիւնը։ Խումբը կիրակի, սեպտ. 27-ին, ներկայացրեց Լէօնկավալլօյի «Զազա» օպերան, որի մէջ կենտրօնական դերեր կատարող տ. Վիկշեմսկայան (Զազա) և Բօրիսենկօն (Միլի Դիւֆրէն) հանդէս եկան իրանց բոլոր ընդունակութեամբ և ձիրքերով։ Երգչուհի Վիկշեմսկայան մեծ հմտութիւն ցոյց տուեց նաև օպերայի հոգեբանական մօմենտներում։

Խումբը այսօր տալու է Զայկօվսկու «Զաբօղէյկա» օպերան։

—

Սեպտեմբերի 27-ի ներկայացումով վրաց դրամատիկական ընկերութիւնը սկսեց իր թատերական տարեշրջանը։ Խաղացվեց Էրիսթավի 5 գործ. «Հայրենիք» պատմական դրաման։ Այդ ներկայացման հետաքրքրութեան բևեռն էին կազմում երկու նոր ոյժեր, որոնք վերցրել էին գլխաւոր և բաւականին պատասխանատու դերեր։ Մէկը դրանցից դերասանուհի Կօլխիդէլին է, իսկ միւսը Շարաշիձէն։ Կօլխիդէլին արդարացրեց հասարակութեան յոյսերը, և եթէ բաւականանանք այդ մէկ պիէսով, կարող ենք համարձակօրէն ասել, որ նա վրաց բեմի ամենալաւ ոյժերից մէկը կը լինի։ Շատ պարզ ու որոշ կերպով նկատվում է, որ յարդելի դերասանուհին որոշ շէօլա է անցել, թէև շարժ ու ձևի, միմիկայի բազմակերպութիւնը բացակայում է, որը անշուշտ ժամանակի ընթացքում կուղղվի։ Նա Ռէթեվանի դերը սահուն անցկացրեց։

Գալով Շարաշիձէին (ուսանող Պետերբ. համալսարանի իրաւաբանական ճիւղի 4-րդ կուրսի) պիտի ասենք, որ նա ևս լաւ ապագայ է խոստանում։ Իբրև զգայուն երիտասարդ, պարոնը շատ աջող կերպով կատարեց Լեվանի դերը և առանձնապէս փայլեց վերջին գործողութիւնների մէջ։ Երևում է պարզորոշ կերպով, որ յարգելի սկսնակը գիտէ աշխատել ու իւրացնել իր դերը, արտայայտելով հոգեբանական լուրջ վայրկեանները խելացիօրէն և մտածված կերպով։ Ցանկանք երկուսին էլ կատարեալ աջողութիւն։ Միւս դերակատարներից տ. տ. Աբաշիձէն և Զերքեզաշվիլին ու պ. պ. Գամզրելիձէն, Թեղվանովը, Շաթերաշվիլին և Իվանիձէն սովորականի պէս աջող էին իրանց դերերում։

Որչափ որ խաղի կողմից բաւարար տպաւորութիւն ստացանք, նոյնչափ անբաւարար են պատմական հագուստները, սինեակների արդուզարդը և այլն։ Օր. Շահ-Աբբասի դրանիկները, զօրապետները զինվորները դրում են ինչ-որ հագուստներ, որոնք ոչ մի հեռու են պարսկական զինուորի և առհասարակ մեծամեծների հագուստ լինելուց, այլ աւելի շուտ խառնուրդներ են արաբական, աւղանական և այլն։

Շահ-Աբբասի գլխի թագը եւրոպական միապետների թագերին է նմանում։

Երևակայեցէք, ընթերցող, վրացի տոհմական ազնականի տանը դարսված են ժամանակակից ոճով շինված աթոռներ։ Մեր կարծիքով, այս բոլորը կամ անփութութեան և կամ մեր հարևան պարսիկների և նոյնիսկ վրացիների պատմական կեանքին անծանօթ լինելուցն է առաջ գալիս։ Էլ չենք ասում այն, որ նման պիէսներ խաղալու ժամանակը վաղուց անցել է։ Թատրոնը լիքն էր։ Յ. Դասպարեան

ՄԱՄՈՒԼ

Որոշ ուղղութեան մարդկանց մի խմբակ չէ դադարեցնում, կուսակցական նեղ միտումներից դրդված, այն կեղտոտ արշաւանքը, որ սկսել է իր օրգանների մէջ Ամենայն Հայոց Կաթողիկոս Մատթէոս Բ.-ի դէմ։ Թիւրքիայի և Եգիպտոսի հայ թերթերը—«Լուսաբեր», «Շիրակ», «Արևելեան Մամուլ» և այլք—հարկ եղած պատասխանը տուին և պարզաբանեցին արշաւանքի հեղինակների սուտ ձգտումները։ Բայց այն, ինչ որ թոյլ է տալիս իրան Ամերիկայի «Հայրենիք» թերթը, այն անվայել լեզուն, որ նա բանեցնում է Մատթէոս Բ.-ի վերաբերմամբ, այն սուայող և շինծու խօսքերն ու մտքերը, որ նա վերագրում է Ամենայն Հայոց Կաթողիկոսին՝ նրան վարկաբեկելու նպատակով, արդարև, անհանդուրժելի են, բայց, ի հարկէ, նրանք չեն կարող ամենափոքր յետաշրջումն առաջ բերել մտքերի մէջ, քանի որ գրողը Բօստոնի «Հայրենիք» թերթն է։

Գործածել մի ամբողջ ազգի և եկեղեցու Ընտրեալի դէմ այնպիսի խօսքեր, ինչպէս «գառնազգեստ գայլ», «համեմված տէրերի լպիրշ փիլիսօփայութեամբ», «կրօնաւորի աստուածպետական զառանցանքներով ապականված հոգի» և այլն, և այդ մի այնպիսի անձի դէմ, որ իր նախկին ամբողջ գործունէութեան մէջ եղել է միշտ շիտակ, ուղղամիտ, անբիծ, իսկ կաթողիկոսական գործունէութեան մէջ դեռ նոր է մտել,—այդպիսի վերաբերմունք կարող է թոյլ տալ իրան խուլիգան թերթը, և ոչ փոքր ի շատէ մամուլի և գրչի յարգը ճանաչող օրգանը։

*

Մինչև այսօր բոլոր հայ լաւագոյն և առաջադէմ մտածողներն այն միտքն են քարոզել, թէ հայոց եկեղեցին, լինելով մի ժողովրդական, դեմօկրատիական հաստատութիւն՝ աւելի ևս կը բարձրանայ, աւելի մեծ դեր կը կատարէ հայ ժողովրդի հոգեւոր-բարոյական-մտաւոր կեանքի մէջ, եթէ նրա մէջ մտցվեն որոշ բարեփոխութիւններ, վերանորոգութիւններ այդ ժողովրդական և դեմօկրատիական սկզբունքների համաձայն։ Բայց Բօստոնի տխրահռչակ «Հայրենիք» թերթը այլ կերպ է մտածում։

«Որքան վերանորոգվի, որքան լուսաւորվի եկեղեցին, այնքան նա խաւարեցնող, այնքան նա վտանգաւոր է։ Նա մի պատմական չարիք է։ Ամենավտանգաւոր եկեղեցին՝ ամենաբարեփոխված եկեղեցին է»։

Ի հարկէ, կարելի էր հերքել այս սօփեստական զառանցանքները, կարելի էր արհամարհանքի ենթարկել այն մարդկանց, որոնք մի կողմից փառաւորապէս վայելում են նրա գանձերը, օգտվում են նրանից, բայց չէ՞ որ գրողը դարձեալ «Հայրենիք» թերթն է։

Մենք միայն առաջ բերեցինք վերոյիշեալ խօսքերը իբրև նմուշ, թէ որքան փչացած են բարքերը և բարոյական հասկացողութիւնները։

*

Հակակրօն և հակաեկեղեցական պայքարի դէմ զինվել են հայ բողոքականները։ «Լոյսի» խմբագիր Մ. Մինասեան մի մեծ յօդուածով, որ տպված է «Բիւզանդիոնի» մէջ, շեշտելով հայոց եկեղեցու «խորապէս ազգային» հանգամանքը և մեր նախահայրերի թողած ամենից թանգագին ժառանգութիւնը, ասում է։

Ապահովաբար պարծանօք կրնանք յայտարարել, թէ հայ ցեղը՝ իր բարձրագոյն ներկայացուցիչներուն մէջ՝ ընդունակ եղած է հոգեկան այնպիսի խոր փոքաութիւններու, կրօնական հոգեբաղձութիւններու, այնպիսի միսթիք պաշտման, որ եթէ քաղաքակիրթ աշխարհի վրայ ունեցած իրենց ազդեցութեան կողմանէ բաղդաւորեան իսկ չեն կրնար դրուիլ հրէական ցեղին կրօնական կեանքի արտադրութիւններուն հետ, սակայն զգացումի խորութեան, ներշնչման վեհութեան ու պաշտումի պատկառութեան կողմանէ յաճախ կը գերազանցեն իսկ զանոնք։ Հայաստանեայց Եկեղեցին է այսպէս, Հայ սրտի դարաւոր վաստակոց այս փառաւոր յիշատակարանը, որ բարձր արժէքմը ու նշանակութիւն կընծայէ հայ ազգին ու հայ պատմութեան։ Աւանց անոր՝ մեր 2000 տարուան ազգային կեանքը գրեթէ աննշանակ գոյութիւն մը եղած պիտի ըլլար, եթէ երբէք կարելի իսկ ըլլար ազգային կեանքի մը շարունակութիւնը՝ ինչ որ խիստ տարակուսելի է։ Հայաստանեայց Եկեղեցիին առթած ներշնչումներէն և իդէալներէն զրկուած հայ ժողովուրդը ապահովաբար պիտի ընկճուէր իր կրած տառապանքներուն տակ և պիտի կորսնցնէր ինքնապահութեան միակ ուժը, որ սրտի խորքերէն կը ծնի։

*

«Խթթաթալյի» համար 1909 թուականը, ինչպէս երևում է, ճակատագրական է։

Նա տարուբերվում է ինտրիգանների ճօճաքարանում և չէ կարողանում սթափվել։

Նրան թելադրում են ի միջի այլոց Ա. Քալանթարին, Հ. Առաքելեանին, Ա. Աթանասեանին և մի քանի ուրիշներին ծաղրել, և նա «աշխատում է»։

Մի անգամ փորձեց ծաղրել դիւղ գնացող գիւղատնտեսներին՝ Ա. Քալանթարին, Ա. Աթանասեանին, Կ. Աֆրիկեանին, Ս. Էյրանեանին և սարսափելի խայտառակվեց։ Զաւեշտաթերթը, զոհ գնալով ինտրիգա լարողի թելադրութիւններին, չը կարողացաւ ըմբռնել ագրօնոմների կատարած գործնական բարեփոխութիւնների նշանակութիւնը։

Նա ծաղրեց այն ժամանակ մարդկանց՝ գործնական ժողովրդասիրաբան գործունէութեան համար։

Այդ նօմերը չանցաւ։

Այժմ զաւեշտաթերթը փորձում է նոր հոդ։ Նկարելով Ա. Քալանթարին մի ուրիշ ընկերակցութեան՝ մէջ Ա. Խատիսեանի, վազուց ասպարէզից հեռացած Սպանդարեանի և մի քանի ուրիշների հետ, անուանում է պոռոտախօսներ և փորձում է ծաղրել Հ. Առաքելեանի թղթակցութիւնները Էջմիածնից։

Ինտրիգա մղող բարեկամների նոր թելադրութիւնը դուրս եկաւ աւելի անաջող։

Տարին ճակատագրական է զաւեշտաթերթի համար։

Ինտրիգասէր թելադրիչները յիմարացնելով զաւեշտաթերթի դեկավարներին՝ հանում են իրանց վրէժը այն ծաղրի համար, որ անցեալ տարիները թափվում էր նրանց գլխին այդ նոյն թերթի կողմից։

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Իգդիր, 29 յուլիսի *)

Մօտաւորապէս երկու տարի կայ, ինչ մամուլի մէջ, գլխաւորապէս «Գործի» և նախորդների մէջ, շարունակ գրվում է «Ջրաղացի» մասին յայտնի խմբակի վարձկան գրչակների կողմից։

Ժամանակին պատասխանվել է Հրայրներին, Նարինջեաններին, Դրամբեաններին, բայց «Վտակ», «Գործ» թերթերի խմբագիրները,—պատասխանները ձգել են խմբագրական զամբիւղները։

Քանի որ յիշեալ խնդրի մասին խօսվում է նաև «Մշակում» (№ 158), ուստի թոյլ տուէք մի երկու խօսքով մեր ասելիքը հրատարակենք ի լուր հետաքրքրվողների. գուցէ այդպիսով նպաստենք վերջ տալու զանազան զրպարտութիւնների։

Սրանից 16—17 տարի առաջ Իգդիրում ծախվում էր մի Ջրաղաց, որի տէրը կենում էր Վաղարշապատում։ Կանայեաններից մի երկու հոգի կամենում են գնել այդ Ջրաղացը և նուիրել դպրոցին ի յիշատակ հանգուցեալ Աղախան Կանայեանցի։ այդ նպատակով Մկրտ. Կ.-ը ուղևորվում է Վաղարշապատ և գնում է Ջրաղացը 1350 ռուբլով։ Մենք դիմում ենք խնդրով ուր հարկն է, որպէսզի մեր նուէր Ջրաղացն ընդունվի-հաստատվի։ Մի միջոց անցնելուց յետոյ էջմիածնի սինոդը յայտնում է մեզ, որ կառավարութիւնը նուէրը չէ ընդունել—հաստատել, որովհետև այդ գոյքը «սեփականութիւն չէ»։ (1893, № 945. копія—սինոդից № 45-1900)։

Չը նայելով այդ հանգամանքին մենք Ջրաղացատէրերս մեր ցանկութեան համաձայն նուիրեցինք Ջրաղացի եկամուտը դպրոցին մի երկու տարի, մինչև դպրոցների փակումը։ Որ եկամուտը մինչև 1895 թիւը յանձնված է դպրոցին, չեն ուրանում ոչ Դրամբեանը և ոչ էլ նրա ընկերները։ «Մինչև երբ դպրոցները փակվեցին,—գրում էր «Վտակում» Նարինջեան,—Կանայեանները իրանց ձեռքն առան Ջրաղացը և օգտվում են մինչև այժմ»։ Այս միտքը կայ և Դրամբեանի գրածում։ Նախ ոչ՝ թէ «դպրոցի փակումից յետոյ իրանց ձեռքն առան», այլ միշտ, դրանից առաջ էլ իրանց ձեռքին էր Ջրաղացը, և երկրորդ՝ ապա թէ՞նչ էիք կարծում, պարոններ, Ջրաղացը ում յանձնէինք, Բօգուսլաւսկին, որ շատ աշխատեց խլել մեր ձեռքից, այն Բօգուսլաւսկին, որի դրագիրն էր Ե. Նարինջանը։

Դպրոցների փակումից յետոյ, մենք երբէք չէինք կարող մարգարէանալ, որ վերացվելու են դպրոցները տասը երկար տարիներից յետոյ. բնականաբար մեր Ջրաղացը մերը համարելով, մենք աշխատել ենք նրա վրա, առաջվայ խարխուլ շէնքը քանդել և իր նախկին տեղից հեռու նորից հիմն ի վեր կառուցել նոր շէնք քարաշէն՝ մեծամեծ ծախսերով, և որ գլխաւորն է՝ այսքան երկար ժամանակի ընթացքում՝ մեր մէջ զանազան բաժանումներ ու փոխառութիւններ են տեղի ունեցել, տէրերն են փոխվել, որոնք այժմ բնաւ հնարաւորութիւն չունեն իրանց կայքը նուիրաբերելու։ Սրանից 17 տարի առաջ նուիրվում էր 1350 ռ. արժողութեան կայք տէրերի այլ կազմով, իսկ այժմ ոչ թէ «մի քանի ռուբլի նոր ծախսեր են եղել» («Վտակ») տէրերի նոր կազմով, այլ շատ. բաւական է ի նկատի ունենալ վերոգրեալ հանգամանքը։

1) Դպրոցի «սրտացաւ» փաստաբան Դրամբեանը գրում է, որ «կողմնակի գնողները զիջելով ժողովրդին հրաժարվում են Ջրաղացը գնելուց». թէ ինչ ժողովրդի զիջեցին այդ նոյնքան «դպրոցասէր» գնողները, հետաքրքրական է իմանալ, կամ ովքեր էին այդ կողմնակի գնողները. նրանք, որոնց խնկարկում էք դուք, Դրամբեան։

Կողմնակի մի գնող է եկել Վաղարշապատ (Յովհաննէս Շերմազանեան) և մէկ էլ Մկրտ. Կ.-ը, որն աւելի ձեռնտու գին տալով գնում է Ջրաղացը։ «Աշխատվում է ընդամենը 1200 ռ.-ով ձեռք բերել»—գրում է Դրամբեանը։ Նախ 1200 ռ.-ով չէ առնված, այլ 1350 ռ., և վերջապէս ինչ «աշխատութիւն է», երբ ծախվում է 1500 ռ.-ով առնվում 1350-ով։

2) Ժողովուրդը ոչ մի «հասարակական աշխատանք» չէ դրած դրել «հանելով Ջրաղացի առուները»։ Դրամբեան, դուք չը դիտէք մի՞թէ, որ առուները պատկանում

*) Ծանօթ. խմբ.—Նիւթերի առատութեան պատճառով անկարող եղանք իր ժամանակին տպել այս նամակը։

են հասարակութեան, որը և հանում, մաքրում է իր հողերը ջրելու համար և կամ մինչև այսօր էլ, ուրիշ ջրաղացների նկատմամբ ևս չը գիտէք «էվլաուի» կոչված աշխատանքի սովորոյթն ու բնոյթը. ուստի էք ուզում մոլորեցնել. ժողովրդին. այդ ձեզ չի աջողի։

3) Ռուբէն Դրամբեանը ինչ-որ կտակի խնդիր էլ է մէջտեղ բերում, որ բնաւ գոյութիւն չէ ունեցել։

Այսպէս ուրեմն առանց որևէ «դիջումի» առնված է ջրաղացը և որի վրա հասարակութիւնը չէ դրել իր աշխատանքը ձրիաբար, ջրաղացի եկամուտը նուիրել ենք՝ նուէրի չընդունվելուց յետոյ էլ, իսկ դըպրոցների փակման ժամանակամիջոցին կատարված վերոյիշեալ հանգամանքների շնորհիւ անկարող ենք նուիրել ջրաղացը։ Սակայն ինչ վերաբերվում է դպրոցի օժանդակելուն, ինչպէս վերաբացումից յետոյ օժանդակել ենք, այժմ էլ ըստ մեր կարողութեան ու ցանկութեան պատրաստ ենք մեր բարոյական պարտքը կատարելու։

Այս բոլորից յետոյ մնում է զարմանալ ստախօսների անբարեխղճութեան վրա։

Ակամայից բացագանչում ենք՝ «ով ժամանակներ, ով բարքեր»։

Ջրաղացատէրերից՝ Մկր. Կանայեանց

ՀԱՇԻՒ

Հանգանակիչ Մասնաժողովի ի նպաստ Թիւրքական Հայաստանի հայ տառապեալների

Մասնաժողովիս ներկայացրած վերջին հաշուի համաձայն՝ առ 1-ն յուլիսի 1909 թ. մնում էր 2470 ր. 01 կ.։

Այնուհետև յատկապէս յօգուտ Աղանայի և շրջակայքի հայ կարօտեալների ստացված են հետեւեալ նուէրները.

1) Բազուից՝ Վալ. Նիկ. Տէր-Յովսէփեանից 25 ր., առևտ. տուն Ի. Լ. Բէգլարեանց, եղբ. Կարապետեանց և ընկ. 100 ր., ինժ. Օհան Տէր-Օհանեանից 10 ր., ինժ. Ներս. Ղազանցից 60 ր., Մ. Լ. Բօնդարեվսկուց 10 ր.։ Ընդամենը 205 ր.։

2) Սարատովից՝ Աւ. Հախվերդեանից 3 ր.։

3) Բազուից՝ «Баку» թերթի խմբագրութեան միջոցով 69 ր. 75 կ. (Ա. Բէգզատեանից 50 ր. և Մ. Ս. Կ.-ից 20 ր.։ Այդ գումարից զեղչված է 25 կ. փոխադրութեան համար)։

4) Թիֆլիսում Մն. Խունտնցից 30 ր., «Մշակի» խմբագրութիւնից՝ 10-րդ անգամ (թերթի միջոցով հանգանակված) 138 ր. 63 կ.։ Ընդամենը 168 ր. 63 կ.։

5) Սղնախից՝ անյայտ ոմնից 3 ր.։

6) Բազուից՝ «Баку» թերթի միջոցով 102 ր. 54 կ.։ (Այս գումարը նուիրել են՝ Մ. Կարա-Մուրզա 5 ր., Խ. Ա. Մարգարեանցի ժողոված 18 ր. 04 կ., եղբ. Զիվանշիրօվների գործարանի տէրերից և ծառայողներից 28 ր. 40 կ., Ի. Ն. Տէր-Ակօպով ընկ. քաղ. դրասենեակի ծառայողներից 26 ր. 50 կ. և Յ. Ստեփանեանցից 25 ր.։ Ընդամենը 102 ր. 94 կ., որից զեղչված է փոխադրութեան ծախք 40 կ.)։

7) Բազուից՝ «Баку» թերթի միջոցով Ռուսակ. Նաւթ. Ընկ. (Руно) բանուորները նուիրել են 300 ր., որից 75 կ. փոխադրութեան ծախքը զեղչելով ստացված է 299 ր. 25 կ.։

8) Բազուից՝ «Баку» թերթի միջոցով Փիթոյեվ և ընկ. ծառայողներից, արհեստաւորներից և բանուորներից 1200 ր. 45 կ., Ա. Սափարեանից 25 ր., Պ. Տէր-Յովհաննէսեանից 1 ր. 25 կ. և Տ. Բէգզատեանի ձեռքով Վ. Ի. Մելիք-Հայկազեանից 25 ր., գօլտ. Ա. Յովհաննէսեանից 25 ր., Աղաբաբեան ամուսիններից 10 ր.։ Ընդամենը 1286 ր. 70 կ., որից փոխադր. ծախքը՝ 80 կ.՝ հանելով ստացված է 1285 ր. 90 կ.։

9) Եօլթանից՝ (Անդրկասպ նահ.) Տ. Յակոբեանի և Աստ. Մելքումեանի միջոցով յօգուտ աղանացիների տրված երեկոյթի զբաղիւնք 77 ր. 70 կ.։

10) Բազուից՝ «Баку» թերթի միջոցով Դ. Բունեաթեանից 5 ր., Կ. Վ. Բլիօվսկուց 50 ր. և Ս. Բ. Բերնշտէյնից 10 ր.։ Ընդամենը 65 ր., որից հանելով 25 կ. փոխադր. ծախք՝ ստացված է 64 ր. 75 կ.։

11) Մանգլիսից՝ բժ. Տ. Թադէոսեանի միջոցով՝ ամնտեղ յուլիսի 25-ին կայացած թատր. ներկայացման զբաղիւնք 68 ր. 80 կ.։

12) Բազուից՝ «Баку» թերթի միջոցով Ր. Խ. Լեվ և որդիք 35 ռուբ., Լ. Ե. Իցկովիչ 50 ր., Յ. Փ. Մելիք-Դաղայեան 25 ր.։ Ընդամենը 110 ր., որից հանելով 40 կ. փոխադր. ծախք՝ ստացված է 109 ր. 60 կ.։

13) Թիֆլիսում՝ Ն. Աբէլեանից 5 ր. և Կ. Քօչարեանից 5 ր.։ Ընդամենը 10 ր.։

14) Կրասնօվոդսկից՝ Բ. Ա. Բաղդասարեանից 2 ր.։

15) Շամախուց՝ հայոց թեմ. առաջնորդի միջոցով, Շամախու թեմում ժողովված, Դերբենտի գործակալից 32 ր., Սալիանի Մկրտիչ քահանայից 7 ր., Գէօքչայի Եփրեմ քահանայից 10 ր. 02 կոպ., Գէօքչայի Ա. մասի գործակալ Ստեփաննոս քահանայից 12 ր. 04 կ.։ Ընդամենը 61 ր. 06 կ.։

16) Ասրախանից՝ անյայտ ոմնից 100 ր.։

17) Ալուպկայից՝ Ա. Բ. Յովսեփեանի միջոցով՝ այնտեղի հայ գաղութից ժողովված՝ 44 ր.։

18) Պեռաֆզորսկից՝ Գ. Մելիքիսեանի և Մ. Շալամեանի միջոցով օգոստ. 2-ին այնտեղ կայացած համերգի ժամանակ բուֆետի արդիւնք՝ 10 ր.։

19) Բազուից՝ «Баку» թերթի միջոցով Լանդմանից 5 ր., Բ. Իսկանդարովի ժառանգներից 25 ր., Ս. Տէր-Պետրոսեանից 10 ր. և Պ. Տէր-Յովհաննէսեանից 1 ր. 25 կ.։ Ընդամենը 66 ր. 25 կ., որից փոխադր. ծախք՝ 25 կ. հանելով ստացված է 66 ր.։

20) Բազուից՝ Մ. Տէր-Յովհաննիսեանի միջոցով՝ Ա. Ի. Մանթաշեան և ընկ. Բամանիի 58-րդ նաւթահանքի մի քանի բանուորներից 28 ր. 50 կ.։

21) Բազուից՝ «Баку» թերթի միջոցով Մ. Մարդանեանից 8 ր. 50 կ., Կասպեան ընկ. գործարանի ծառայողներից և արհեստաւորներից 38 ր. 80 կ., պրօվիզ. Թոստոմեանից 15 ր., Արաբօ-Կասպեան նաւթ. ընկ. 100 ր., Սարուխանեանի գրասենեակի ծառայողներից 44 ր.։ Ընդամենը 206 ր. 30 կ., որից փոխադր. ծախքը՝ 65 կ. հանելով ստացված է 205 ր. 65 կ.։

22) Շամախուց՝ Շամախու թեմ. առաջնորդից, իր թեմում հանգանակված՝ Շամախու գործակալից 5 ր. 85 կ., Գէօքչայի Բ. մասի գործակալից 17 ր. 30 կ. և Ղօշանլուի գործակալից 28 ր. 56 կ.։ Ընդամենը 51 ր. 71 կ.։

23) Լագօդաղից՝ Վաս. Աւագեանից 5 ր.։

24) Բազուից «Баку» թերթի միջոցով՝ Մագուլեանից 50 ր. և Միքայէլեանից 1 ր.։ Ընդամենը 51 ր., որից 25 կ. փոխադր. ծախք հաշուելով՝ ստացված է 50 ր. 75 կ.։

25) Թիֆլիսում ի յիշատակ հանգուցեալ Եղ. Գուլուլեանի 25 ր.։

Ընդհանուր գումարն է՝ 3117 ր. 59 կ.։ Յուլիսի 1-ին մնում էր 2470 ր. 01 կ.։ Ուրեմն ընդամենը՝ 5587 ր. 60 կ.։

Այս գումարից փոխադրված է Կ. Պոլիս, ռուսական դեսպանատան միջոցով, հայոց պարիարքին՝ ի նպաստ Աղանայի հայ կարօտեալների՝ 250 օսմ. լիրա կամ 2162 ր. 95 կ.։ Մնում է պատրաստ 3375 ր. 35 կ., որպիսի գումարը գտնվում է Թիֆլիսի Առևտր. բանկում ընթացիկ հաշուով և պիտի գործածվի յատկապէս Աղանայի և շրջակայքի հայ անտէր որբերի պահպանութեանը։

Գանձապահ՝ Ա. Սարուխանեան
Քարտուղար՝ Հ. Առաքելեան

ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՊԵՏԵՐ. ՀԵՌ. ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

26 սեպտեմբերի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Առաւօտեան ժամը 9-ին օդագնացութեան հրապարակից բարձրացան «Լէբէդ» օդապարիկը չորս օֆիցէրներով և վարպետով և «Ուչերնի» օդապարիկը երկու օֆիցէրներով և վարպետով։ «Լէբէդը» բարձրացաւ 500 մետր և օդում կախված մնաց երեք ժամ՝ երեսը շրջած դէպի Ցարսկօէ Սէլօ և Դուտերհօֆ։ Վերադարձին, ընկնելով մառախուղի մէջ, օդապարիկը ստիպված եղաւ իջնել Նարվեան դռներ կոչված տեղում։ Ապա կրկին բարձրանալով՝ օդապարիկը աջողութեամբ իջաւ օդագնացութեան հրապարակի վրա։ «Ուչերնին» Լիզօվոյի և Կրասնօէ Սէլօյի միջև անյայտ պատճառից սկսեց իջնել։ Մինչև երեկ. ժամը 7-ը նրա մասին ոչ մի տեղեկութիւն չէր կար։

Օրվայ ընթացքում խօլերայով հիւանդացան 31, մեռան 9 հոգի։

Իր կալուածքում վախճանվեց ստատս-սեկրէտար, Պետական Խորհրդի անդամ, իսկական գաղտնի խորհրդական Պօլօվցեվը։

Պետերբուրգի հոգևոր սեմինարիան մեծ հանդիսաւորութեամբ ոտնում է իր գոյութեան հարիւրամեակը։

ՏԱՄԲՕՎ։ Բացվեց մանը վարկի հասատատութիւնների ներկայացուցիչների հաւաքումը։ Եկել են 100-ից աւելի ներկայացուցիչներ։

ՄՕՍԿՎԱ։ Բուսակօվի խանութից, Տվերսկայա փողոցի վրա, յափշտակել են 40,000 ռուբլու դրամ և արժէթղթեր։

27 սեպտեմբերի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Կայացաւ գրագէտների և գիտնականների կասայի արտակարգ ընդհանուր ժողովը, որ պէտք է քննէր կասայի կանոնադրութեան փոփոխումները համաձայն ներքին գործոց մինիստրի պահանջների։ Ժողովի նախագահ ընտրվեց ակադեմիկոս Զերնիշեվը։ Վարչութեան առաջարկը՝ համակերպվել մինիստրի պահանջներին՝ ընդունվեց 58 ձայնով ընդդէմ 5-ի։ Տասը հոգի ձեռնպահ մնացին։

ՄՕՍԿՎԱ։ Կայացաւ ընտրութիւններ առաջին կուրիայում Պետական Դումայի մէկ անդամ ընտրելու համար։

ՄՕՍԿՎԱ։ «Զինական» դրօսատեղում բացվեց առաջին ռուս տպագրիչ Իվան Ֆէօդորովի յուշարձանը ներկայութեամբ իշխանութեան և զիտական ընկերութիւնների ներկայացուցիչների։

ԼԻՒԲԼԻՆ։ Եպիսկոպոս Եվլոգին Խօլմից եկաւ տեղս և հանդիսաւոր օծում կատարեց մատուռի շինութեան տեղը յեղափոխութեան ժամանակ ընկած զոհերի ընդհանուր գերեզմանի վրա։ Մատուռը կառուցվում է նահանգապետի ձեռներէցութեամբ՝ բացառապէս նահանգի մէջ կատարված նուիրատուութիւններով։

ՎԱՐՇԱՎԱ։ Ցերեկվայ ժամը 1-ին ընդհանուր-նահանգապետի օգնական գեներալ Աղէօֆը առանց դուրս եկաւ սեփական աւտոմօբիլով իր բարեկամ շօֆերի հետ։ Անյայտ պատճառներից պայթեց բենզինը, որի պաշարը 3 պուդ չափ էր։ Գեներալը թեթև վնասված է. աւելի շատ վնասվել է շօֆերը. լուրջ կերպով վիրաւորված են 6 կողմնակի անցորդներ. անցորդներից մէկը սպանված է։ Աւտոմօբիլը այրվեց։

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ Ա. ՔԱԼԱՆԹԱՐ
Յ. ՏԷՐ-ՄԱՐԿՈՍԵԱՆ
Հ. ԱՌԱՔԵԼԵԱՆ

ՏԵՂԵԿԱՏՈՒ

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ

ԲԺՇԿԱՊԵՏ Բ. ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆԻ

Հիմնված 1880 թ.

(Կուկիա, Վօրօնցօվի արձանի հանդէպ)
Ամեն օր, բացի կիրակի օրերից
ՊՕՊԻՕՏԵՐԸ՝
Բ. Ա. ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆ—11—12 ժ. վիրաբուժութեան և վեներական (սիֆիլիս) հ.։
Կ. Մ. ԶԻԿՕՎԱՆԻ—9½—11 ժ. աչքի, ներքին և նեարդային։
Զ. Ի. ԲԱԲԱՆԱՍԵԱՆ—10—11 ժ. մանկաբարձութեան, կանանց և երեխայոց հ.։
Ն. Տ. ՄՈՒԼԻՆ—10—12 ժ. ականջի, կոկորդի և քթի հիւ.։
Մ. Գ. ԱՒԵՏԻՍԵԱՆ—11—12 ժ. մորթու. վեներակ., միրարուժութեան և միզասեռ. հ,
Ա. Մ. ՓՈՒՂԻՆՕՎ—12—1 ժ. ներքին և երեխայոց հիւ. և ծաղկահատ.։
Ն. Վ. ԱԼԲԵԹՍ—1½. ներքին և երեխայոց հ.։
Օ. Վ. ԳԵՑԵՎՍԿԱՅԱ-ԷՆԳԵԼ—12—1 ժ. մանկաբարձ., կանանց և երեխայոց հ.։
Ա. Պ. ԿԱՐԱՊԵՏԵԱՆ—1—1½ ժ. ներքին և երեխայոց հիւ.։
Յ. Մ. ԿԷՕՆՃԵԱՆ—ատամնաբոյժ—8½—11½ ժ., պլօմբներ և արհեստական ատամներ։

ԵՐԵԿՈՆԵՐԸ՝
Օ. Վ. ԳԵՑԵՎՍԿԱՅԱ-ԷՆԳԵԼ—6—6½ ժ. մանկաբարձ., կանանց և երեխայոց հ.։
Ի. Ֆ. ՄԱՐՑԻՆԵՎՍԿԻ—6—7 ժ. ներքին և երեխայոց հիւ. և ծաղկահատ.։

Վճարը 50 կ.։ Զրաւորները ձրի։ Համախորհրդի (կօնսիլիումի) և օպերացիայի համար առանձին։

Հիւանդանոցի վերատեսուչ՝
Բժշկապետ Բ. Նաւասարդեան

ԲԺՇԿԱՊԵՏ

Գ. Ա. ՀԱԽՎԵՐԴԵԱՆ

Մանագէտ միզասեռական, սիֆիլիս և վեներական հիւանդութիւնների։
Ընդունում է հիւանդներին՝
Առաւ. ժամը 12—1-ը, երեկ. ժամը 6—8-ը։
Կիրակի օրերը՝ միայն ժամը 12—1-ը։
Կուկիա, Սեմեոնովսկայա փ. № 16.
(Ե. ու. Կ.) 984. 100—3

ԲԺԻՇԿ

Խ. Բ. ՄԵԼԻՔ-ԷՅՆԱԹԵԱՆ

Մանագէտ սիֆիլիս, վեներական, միզասեռական և կաշուի հիւանդութիւնների։ Հիւանդների ընդունելութիւնը՝ առաւօտ. ժամը 9-ից մինչև 10-ը, երեկոյեան ժամը 5-ից մինչև 7-ը։
Կաէնիեվսկայա փ., № 6, «Վէացել» հիւրանոցի մօտ։ (Ի. Հ. Շ.) 955. 100—5

ՄԵԳԻՑԻՆԱՅԻ
ՖԷԼԴՇԷՐ-ՄԱՍՍԱԺԻՍՏ
Յ. Գ. ԵՍԱՅԵԱՆ

Բժիշկների որոշմամբ կատարում է կաշուի տակ սրսկումներ, լուծումներ (սրինջով.), վերքի փաթաթումն, դեղերի քսումն (втираніе) և այլն։ Էլեքտրականութիւն բէվմատիզմի, սեռական անկարողութեան և թուլութեան դէմ։ Մասսաժ էլեքտրական գործիքով և ձեռքով. մանաւոր և ընդհանուր մասաժ։ Բժշկական մարմնամարզութիւն, ծաղկահատութիւն։ Օտարերկրեայ հիւանդներին ցոյց է տալիս մասնագէտ հմուտ բժիշկներ։ Տալիս է այլ և այլ բժշկական-առողջապահական խորհուրդներ։
Ընդունելութիւնը 4—5 ժամը։ Семеновская ул., № 9, Վօրօնցօվի կամուրջին մօտ։
(Օ. մ.) 857. 0—14

ՑԱՑՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

„ԵԱԼՏԱ“

Հիւրանոց-Ճաշարան

Վրաց ուղղափառ նախկին սեմինարիայի դիմաց։
Ամեն օր թարմ մթերքներից տաք և պաղ նախաճաշ, թարմ կարկանդակներ։

ՃԱՇ ԵՒ ԸՆԹՐԻՔ

Եւրոպական եւ ասիական տեսակներ։
Կերակուրներ տրվում են նաև տները։ Ամսով ճաշողները օգտվում են 20% զեղչով։
ԳՆԵՐԸ ՉՐԱՏ ՄՐԱՑԵԼԻ ԵՆ
Ցարգանօք՝ տնօրէն Պատուական Կիրակոսեանց
(Հ. Կ. Ե.) 981. 3—3

Լոյս տեսաւ

B. Lucifer

«Աշխատանքի եւ աշխատաւորի գաղափարը Ադա Նեգրիի, Ց. Յակոբեանի եւ Շ. Կուրդինեանի բանաստեղծութիւնների մէջ»։
Դիմել՝ Ростовъ н/Д. Б. Садовая, 47. Гайку Аваканцу. ԴԻՆԸ 20 ԿՈՊ.։
(Ե. Հ. Կ.) 1005. 3—1

Տ. Մ. ՓԻԼՕՅԵԱՆԻ

Առևտրական գիտութիւնների կուրսերում

ՖՐԱՆՍԵՐԷՆ, ԳԵՐՄԱՆԵՐԷՆ ԵՒ ԱՆԳԼԻԵՐԷՆ

կարդալ, գրել և խօսել սովորեցնում են 8 ամսում տեսական և գործնական զրաղմունքների միջոցով. կազմակերպվում են խմբակներ ըստ լեզ. ուսումնասիրման վկ. ձեռք բերելու համար։ Ընդունելութիւնը սեպտեմբերի 1-ից ամեն օր 10—12 և 4—7 ժամ.։
Մեքայէլեան պրոսպ. № 24/4
Կուրսերի հիմնադիր՝ առևտր. գիտութեանց կանդիդատ Տ. ՓԻԼՕՅԵԱՆ
808. (Օ. մ.) 20—18

ԱՌԱՋՆԱԿԱՐԳ „ԿԱՎԿԱՋ“ ՀԻՒՐԱՆՈՑ

Երեւանեան հրապարակ, տ. Միրզոյեանի, տիկ. № 358.

ԹԻՖԼԻՍՈՒՄ

Անպայման մաքրութիւն, անդորրութիւն և հանգստութիւն, էլեքտրական լուսաւորութիւն, տելեֆոն և վանք։ 50 համարներ՝ 1 ռուբ. սկսած։ Քաղաքավարի և շուտափոյթ աշխատող ծառայողներ։

Պ. պ. վոյաժօրներին և ամսով վարձողներին մեծ զեղչ

ՄԵՆԻՈՒ։

I. ձաշ՝ 2 կերակ. 60 կ., 1 բ. օղի և 1 բ. գինի։ II. ձաշ՝ 3 կերակ.՝ 75 կ., 1 բ. օղի, 1 բ. գինի, 1 թաս սուրճ։ I. ձաշ՝ 4 կերակ. 1 բ., 1 բ. օղի, կէս շ. գինի և 1 թ. սուրճ։ IV. ձաշ՝ 5 կերակ. 1 բ. 50 կ., 1 բ. օղի, կէս շ. գ. և 1 թ. սուրճ։

Ցարգանքով՝ Ի. Կորչիլայա և Ն. Սիխարուլիձե

(Օ. մ.) 870. 100—14

ՄՍԻ ԿԱՐԿԱՆԴԱԿ — Փորձված իր սեփ. երեխայի վրա — ԻՍԿԱԿԱՆ

ՓՈՇԻ

„ՈՐԲՈՐԱՆ“

ՍՆՆԴԱՐԱՐ ՆԻՒԹ

«Որբորան» Ա. ԴՄԻՏՐԻԵՎԱՅԻ, թոյլատրված Պետերբ. Բժշկ. Վարչ. № 7252 գրութեամբ։

Այնպիսի հիւանդութիւնների համար, որոնք առաջացնում են ՆԻՀԱՐՈՒԹԻՒՆ և ՈՅԾԵՐԻ ՍՊԱՌՈՒՄՆ—արեան պակասութեան, ջղերի թուլացման, թարախարնոյթ պրոցէսսի, ոսկրախտի, աղիքների հիւանդութեան և ԳԼԽԱՒՈՐԱԲԱՐ ԹՈՒԲԵՐԻ ՀԻՒԱՆԴՈՒԹԵԱՆ ժամանակ։ Վաճառվում է յայտնի դեղատներում և դեղավաճառանոց-պահեստներում։ Կարկանդակի փաթեթի գինը 75 կ., իսկ փոշունը՝ 1 ր. 50 կ.։ Մանրամասն նկարագրութիւնը—հանդերձ բժիշկների և հիւանդների գովասանական վկայութիւններով—ՁՐԻ։

Թիֆլիսի ներկայացուցիչ՝ Ե. ՀԷՔԷԷԵԱՆ. Վելիամինովսկայա փող., № 4, «Շօկոլադ» կօնդիտերսկում։
(Կ. Ե. Հ.) 999. 0—2

ՅԻՆԱՆՄՆԵՐԻ ՄԻՆԻՍՏՐՈՒԹԻՒՆԻՑ ՀԱՍՏԱՏՎԱԾ

ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ԿՈՒՐՍԵՐ

ԵՐԿՈՒ ՍԵՌԻ ՈՒՆՁԱՆՑ ՀԱՄԱՐ

БАКУ, уголъ Красноводск. и Меркурьевск., телеф. № 10—56.

Կուրսերի նպատակն է տալ ունկնդիրներին մասնագիտական և առևտրական կրթութիւն և պատրաստել, հմուտ հաշուապահներ։ Աւարտողները ստանում են ատեստատներ։

Կուրսերում ուսանվում են՝ 1) Առևտրական թւաբանութիւն և թւաբանութիւն համրիչի վրա. 2) Հաշուապահութիւն արդիւնաբերական, գործարանական, առևտրական և բանկային. 3) Առևտրական թղթակցութիւն. 4) Առևտրական տնտեսագիտութիւն. 5) Առևտրական և մուրհակային օրէնքներ. 6) Գեղագրութիւն և արագագրութիւն (ուղղագիր). 7) Ուսուցումն գրող մեքենայի վրա։ Ցանկացողների համար՝ առանձին վճարով լեզուներ և ստենոգրաֆիա։

Ուսումը սկսվելու է սեպտեմբերի 20-ից։ Ընդունելութիւնը սեպտեմբերի 1-ից՝ ամենայն օր կուրսերում, առաւօտեան ժամը 9—12-ը և երեկոյեան 4—7-ը։

Կուրսերի կանոնադրութիւնը (уставъ) և մանրամասն ծրագիրը (программа) տրվում և ուղարկվում են ՁՐԻԱԲԱՐ։ Օտարաքաղաքացիները դիմում են՝ Баку, учредителью коммерческихъ курсовъ А. И. Теръ-Каспарову. (Ե. Շ.) 731. 20—15

ԿՈՎԿԱՍԻ ՀԱՅՈՑ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԿ. ԽՈՐՀՈՒՐԴԸ

Սրանով յայտարարում է, որ Ընկ. Զրի և Էժանագին Ճաշարանում

ՃԱՇ Է ՏՐՎՈՒՄ ՁՔԱՒՈՐ ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻՆ

ԱՄՍԱԿԱՆ 3 ՌՈՒԲԼԻ ՎՃԱՐՈՎ։ Ճաշարանը բացվելու է հոկտեմբերի 1-ից։ Հասցէն՝ Абасъ- Абадская площ. № 7. с. д.
(Կ. Ե. Հ.) 1002. 3—2

Երեքշաբթի, սեպտեմբերի 29-ին
Նշանակված է

Թիֆլիսի Հայ Գիւղատն.-Տնայնագործ. Ընկերութեան

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԸ, որի զբաղմունքի առարկաները կը լինեն. 1) զեկուցում Ընկերութեան ամարային գործունէութեան մասին, 2) Ա. Քալանթարի զեկուցումը լեռնային տընտեսութեան մասին։

ՍԿԻԶԲՆ Է 8 ԺԱՄԻՆ

Նիստը տեղի կունենայ Կովկասեան Գիւղատնտեսական Ընկերութեան դահլիճում (Բարեսաւինսկայա փ., Ալէքսանդրեան այգում)։ Կարող են ներկայ լինել նաև կողմնակի անձեր։
(Կ. Ե.) 2—2

Օգտվեցէք դէպքից

ՇԱՏ ՇԱՀԱՒԷՏ ԵՒ ԶԵՌՆՏՈՒ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՎ ՎԱՃԱՌՎՈՒՄ ԵՆ

հետեւեալ կալուածները՝ արտասահման տեղափոխվելուս պատճառով՝

1) Երկ-յարկանի տուն՝ երկ-յարկանի ֆլիգէլներով և նկուղով, 175 սաժ. գետնի վրա, Թիֆլիսի I քաղաքամասում։

2) Երկ-յարկանի տուն՝ երկ-յարկանի ֆլիգէլներով և 5 կրպակով, 120 սաժ. գետնի վրա, VIII քաղաքամասում (Զուղուբէթում)։

3) Մի այգի՝ խաղողի և այլ պտղատու ծառերով, 2000 սաժ. գետնի վրա՝ VI քաղ.։

4) Կարսի նահանգի Ներքին Քեդիկլեր գիւղին կից՝ օրական 500 պուդ մաքուր աւիւր պատրաստող ջրաղաց, որը մօտ է Քուրակ-տուրա երկաթուղու կայարանին «Դելիքլի գեղրմանի ջրաղաց» անունով և դրա հետ 8 դեսեատին գետնի վրա գտնվող մրգի և զանազան ծառերով հարուստ այգու. 1/4 մասը։

5) Նմանապէս զանազան տնային շարժական հարկաւոր կահ-կարասիք, արծաթեղէն և այլ իրեղէններ։

Ցիշեալ կալուածները բերում են տարեկ. 8500 ր. եկամ. և կարելի է գնել։ Լոկ-լոկ Պայմանների մասին պէտք է դիմել այս հասցէով՝ Тифлисъ, Ново-Арсенальная ул. № 2, соб. домъ,Ованесу Мурузову.

ՇՏԱՊԵՑԷՔ ՕԳՏՎԵԼ ԱՄԵՆԱԱՋՈՂ ՀԱՆԳԱՄԱՆՔԻՑ

(Գ. Ե.) 901. 8—7

ՕՐ. ՎԱՐՎԱՌԻ ՅՈՎՍԷՓԵԱՆ

ՂԱԶԱՐԵԱՆՑԻ

ընակութեան տեղն իմացողներից խնդրում ենք յայտնեն Սամարա Х. Г. Кеворковъ-ին։ Օրիորդը Երեւանի Նահանգի Ղարախանբայլու գիւղի բնակիչ Յովսէփ Ղազարեանցի աղջիկն է, որը 2 տարի առաջ ապրում էր Արմաւիրում։
(Ա. Օ.) 978. 5—5

Ֆրանսիական Շոգենաւային Ընկերութիւն

«ՄԵՍՍԱԺԵՐԻ ՄԱՐԻՏԻՄ»—«MESSAGERIES MARITIMES»

6/19-ին հոկտեմբերի մեկնելու է Բաթումից առաջնակարգ «Danube» շոգենաւը հանդիպելով Տրապիզոն, Սամսոն, Կ. Պոլիս, Դարդանել, Զմիւռնիա, Պիրէյ, Մարսէյլ, Հաւր և Լոնդոն։

Ուղղակի հաղորդակցութեան տոմսակները մինչև Պարիզ, Նիւ-Եորկ և Շանխայ (Զինաստան), Հեռաւոր Արևելք գնացողների համար, կարելի է ստանալ Թիֆլիսում, պակասեցրած գներով։

Ապրանքների և ճանապարհորդների մասին հարկաւոր տեղեկութիւնների համար դիմել ընկերութեան Թիֆլիսի գործակալ պ. Վ. Յակոբեանին, նախկին Արծրունու գալերէյում՝ թիւ 127 գրասենեակը, հեռախօս թիւ 608։ Գրասենեակը բաց է՝ 9—2 ժամը ցերեկվայ և 5—7-ը երեկոյեան, ամեն օր, բացի կիրակի օրերից։
1006. 1—1

Электропечатня Ав. Мугдусіакопова съ С-ми. Большая Ванкская № 3.